/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձ**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ՝ Գ. Գևորգյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Շվեյցարիա /Ժնև / 16.09 - 20.09.2019թ.

- **Նպատակը**

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) կողմից կազմակերպված «Մարդահամարի և կացարանների հաշվառումներն Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար» խորագրով աշխատաժողով և Մարդահամարների և կացարանների հաշվառումների փորձագիտական խմբի հանդիպում:

- **Քննարկված թեմաները**

Հանդիպման շրջանակում ներառված էին հետևյալ երեք հիմնական թեմատիկ ոլորտները, Մարդահամարի տվյալների տարածում և օգտագործում՝ ի նպաստ կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ):

1. Մարդահամարային գործունեության մեջ աշխարհատարածական տեղեկատվության օգտագործման վերջին զարգացումները:

2. Քանի որ Հայաստանի Հանրապետությունը 2020 թ. մարդահամարի շրջափուլի համար ավանդական մեթոդով անցկացվելիք մարդահամարից անցում է կատարում դեպի համակցված մեթոդով անցկացվելիք մարդահամարի, զարգացած երկրների ազգային փորձի և առաջընթացի մասին հաշվետվությունները շատ օգտակար կլինեն հետագա աշխատանքների մշակման և իրականացման համար:

Աշխատաժողովի ընթացքում քննարկված վերոնշյալ թեմաների շրջանակում ներկայացվեցին մասնակից երկրների ազգային փորձը և առաջընթացի մասին հաշվետվությունները՝ առավելապես կենտրոնանալով նոր տեխնոլոգիայի կիրառման և վարչական տվյալների աղբյուրների օգտագործման վրա:

1. Մեթոդաբանության, տեխնոլոգիաների կիրառման, մասնակցության և թեմային առնչվող այլ հարցերի հետ կապված թեստերի արդյունքները.
2. Ոչ մեկին չթողնել անտեսված՝ հատկապես մարդահամարի ընթացքում դժվար հաշվառելի և բնակչության խոցելի խմբերի համատեքստում.
3. Մեթոդաբանություն, տվյալների նոր աղբյուրներ, այդ թվում նաև՝ մեծ տվյալներ.
4. Մարդահամարներում օգտագործելու նպատակով վարչական աղբյուրների որակի գնահատում, մարդահամարի արդյունքների որակի գնահատում.
5. Ապագայի մարդահամարներ՝ հետ 2020թ. ժամանակաշրջան.

6. Մարդահամարային ծախսերի կրճատում.

7. Տեխնոլոգիաներ՝ էլեկտրոնային սարքավորումների կիրառումը մարդահամարների ընթացքում.

8. Տվյալների տարածում՝ տարածման ժամանակակից գործիքների կիրառում.

9. Վիճակագրական տվյալների հսկողություն.

10. Երկրատարածական տվյալներ.

11. ԵՎՀ առաջարկություններին ընդառաջ՝ մարդահամարի բովանդակություն՝ հարցաթերթի մշակում, համացանց և անհատական համակարգիչներ.

12. Մարդահամարների և վիճակագրության այլ ոլորտների փոխկապվածություն՝ ժողովրդագրություն, աշխատանքի և տարածաշրջանային վիճակագրություն:

13. Հետագա գործողությունները:

Աշխատաժողովի ընթացքում ըստ առանձին երկրների ներկայացվեց ԱՊՀ տարածաշրջանում իրականացվելիք ազգային մարդահամարների ծրագրերի համայնապատկերը, նախապատրաստական աշխատանքների ընթացքը, առկա մարտահրավերները, նորարարությունները, ակնկալիքները՝ համաձայն որի.

- ազգային մարդահամարները կընդգրկեն 2019-2023թթ. ժամանակահատվածը.
- կկիրառվի հնարավորինս ներդաշնակեցված մեթոդաբանություն, եզրույթներ, փոփոխականների շրջանակ՝ հնարավորություն ընձեռելով ճշգրտել ԱՊՀ տարածաշրջանի բնակչության թվաքանակը, միգրացիոն հոսքերը և աշխատաշուկան.
- կստեղծվի տեղեկատվական հզոր պոտենցիալ Կայուն զարգացման նպատակների 2030թ. օրակարգի ցուցանիշների մշտադիտարկման համար՝ ինչպես առանձին երկրներում, այնպես էլ տարածաշրջանային կտրվածքով:

Փորձագիտական հանդիպման շրջանակում ներկայացվեցին մարդահամարների և կացարանների հաշվառումների նորարարական, այլընտրանքային մեթոդները՝ հնարավորինս հիմնված երկրում առկա տեղեկատվական ռեսուրսների օգտագործման վրա: Մասնավորապես, ներկայացվեց

Իրենց ուսանելի փորձով հանդես եկան Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իսրայելի, Հյուսիսային Մակեդոնիայի, Ռուսաստանի Դաշնության, Լեհաստանի, Էստոնիայի և այլ երկրների վիճակագրական գրասենյակների ներկայացուցիչները:

Հանդիպման շրջանակում ներկայացվեց նաև Լատվիայի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Գերմանիայի վիճակագրական գրասենյակների նորարարական նախաձեռնությունները, «Վարչական վիճակագրական աղբյուրների օգտագործումը մարդահամարների և կացարանների հաշվառման նպատակով» ԵՏՀ նոր ձեռնարկի նախագիծը, Եվրոստատի ծրագիրը, որը հնարավորություն է ընձեռում գնահատել վարչական ռեգիստրների տվյալների որակը և մի շարք այլ արժեքավոր հաղորդումներ:

- **Արդյունքները**

Աշխատաժողովը և փորձագիտական հանդիպումը հնարավորություն ընձեռեցին ամփոփել փորձագիտական խմբերի գործունեության արդյունքները, շարունակել ծանոթանալ Մարդահամարների և կացարանների հաշվառումների վիճակագրության լավագույն ազգային և միջազգային փորձերին և զարգացման հետագա ուղղություններին՝ դրանք ազգային մակարդակում կիրառելու հեռանկարով: Միջոցառումներն արժեքավոր էին նաև նրանով, որ ԱՊՀ երկրների և

ԵՏՀ, Եվրոստատի, մասնակից այլ երկրների համապատասխան ոլորտի առաջատար մասնագետները հընթացս քննարկեցին ներկայացված նորարարությունների կիրառելիության հնարավորություններն ու սահմանափակումներն իրենց երկրներում: Հանդիպման բոլոր մասնակիցները փաստեցին կատարված աշխատանքների և քննարկումների շարունակականության անհրաժեշտությունը:

- **Նշումներ**

Մասնակցում էին ԱՊՀ անդամ երկրների ժողովրդագրության վիճակագրության մասնագետները, Եվրոստատի, ՄԱԿ-ի ԵՏՀ վիճակագրության և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել է Եվրոպական Ազատ Առևտրի Ասոցացիայի կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ,
վիճակագրական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Գևորգյան